# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 31 | Հուլիս | 2018 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 30 | Հուլիս | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 8091331205 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ; N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն; N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |

| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզային հարկ | Այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28153618 բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

31/07/2018 09:13:24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 23 » մայիսի 2018թ. քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Ն.Ս.Մանանդյանս, քննարկելով վարույթիս թիվ 28153618 քրեական գործի նյութերը՝

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի մայիսի 3-ին ժամը 20:00 Արթիկ քաղաքի Շինարարների փողոցի 7-րդ շենքի 2-րդ բնակարանի բնակչուհի Ժենյա Ժորայի Կեզացյանը ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում է տվել, որ նույն օրը ժամը 19:00-ի սահմաններում իրենց շենքի բակում Արթիկ քաղաքի Շինարարների փողոցի 3-րդ շենքի 33-րդ բնակարանի բնակիչ՝ Արմեն Ռազմիկի Նիկողոսյանը, վիճաբանել է ամուսնու՝ Մխիթար Շավարշի Մխիթարյանի հետ, որի ընթացքում Արմեն Նիկողոսյանը փեսայի՝ Հովհաննես Վոլոդյայի Մանուկյանի և հարևանությամբ բնակվող Ռուստամ Սիրեկանի Համբարյանի հետ միասին ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել իր, ամուսնու և ամուսնու քրոջը՝ Անահիտ Շավարշի Մխիթարյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Մխիթար Շավարշի Մխիթարյանը հաղորդում և բացատրություն է տվել, որ 2018 թվականի մայիսի 3-ին ժամը 19:00-ի սահմաններում իրենց շենքի բակում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Արմեն Ռազմիկի Նիկողոսյանը և Հովհաննես Վոլոդյանի Մանուկյանը ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր մասերին: Հովհաննես Մանուկյանի հարվածների արդյունքում ինքը աջ արմունկի շրջանում ստացել է մարմնական վնասվածքներ, Արմեն Նիկողոսյանի հարվածների արդյունքում ձախ ձեռքի և ոտքի շրջանում ստացել է մարմնական վնասվածքներ, իսկ Ռուստամ Համբարյանը բռունցքներով հարվածներ է հասցրել իր գլխին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Մխիթար Մխիթարյանը բացատրություն է տվել, որ Արմեն Նիկողոսյանին պատկանող խանութից կատարել է ապառիկ գնումներ և նրան պարտք է մնտ 30.000 ՀՀ դրամ գումար: 2018 թվականի մայիսի 3-ին ժամը 18:30-ի սահմաններում անչափահաս որդին ուրիշ խանութից կատարել է գնումները, որը տեսել է Արմեն Նիկողոսյանի կինը, պահանջել է պարտք գումարը: Այդ ժամանակ Արմեն Նիկողոսյանը Հովհաննես Մանուկյանի և Ռուստամ Համբարյանի հետ միասին վիճաբանել են իր հետ, որի ընթացքում ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Վիճաբանությանը միջամտել է կինը՝ Ժենյա Կեզացյանը և քույրը՝ Անահիտ Մխիթարյանը, որի ընթացքում Արմեն Նիկողոսյանը, Հովհաննես Մանուկյանը և Ռուստամ Համբարյանը ծեծի են ենթարկել նաև կնոջը և քրոջը:

Ըստ էության նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև Ժենյա Ժորայի Կեզացյանը և Անահիտ Շավարշի Մխիթարյանը:

Արմեն Նիկողոսյանը բացատրություն է տվել, որ հարևանությամբ բնակվող Մխիթար Մխիթարյանն իր խանութից կատարել է ապառիկ գնումներ և պարտք է մոտ 30.000 ՀՀ դրամ գումար: 2018 թվականի մայիսի 3-ին ժամը 19:00-ի սահմաններում կինը վերջինիցս պահանջել է պարտք գումարը, սակայն Մխիթար Մխիթարյանը վիրավորել է կնոջը: Այդ ժամանակ ինքը մոտեցել է Մխիթար Մխիթարյանին, քաշել վերջինիս շորից, ով վայր է ընկել, ինքը Մխիթար Մխիթարյանին չի հարվածել: Հովհաննես Մանուկյանը և Ռուստամ Համբարյանը Մխիթար Մխիթարյանին կամ նրա կնոջը և քրոջը չեն հարվածել:

Ըստ էության նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև Ռուստամ Սիրեկանի Համբարյանը և Հովհաննես Վոլոդյայի Մանուկյանը:

Համաձայն դատաբժշկական փորձաքնության թիվ 0557 եզրակացության Մխիթար Մխիթարյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ դաստակի 4-րդ և 5-րդ մատների, աջ արմնկային հոդի և ձախ սրունքի շրջանների քերծվածքների ձևերով, հասցվել են բութ առարկաներով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում, հանգամանքներում, առնվազն վեց ներգործության հետևանք են և ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին վերցրած առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0558 եզրակացության Ժենյա Կեզացյանի մոտ փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0556 եզրակացության Անահիտ Մխիթարյանի մոտ փորձաքննության պահին մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0551 եզրակացության Ռուստամ Համբարյանի մարմնի վրա ներկա փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0552 եզրակացության Հովհաննես Մանուկյանի մարմնի վրա ներկա փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0554 եզրակացության Արմեն Նիկողոսյանի մարմնի վրա ներկա փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Կատարված ստուգումներով պարզվել է, որ Մխիթար Մխիթարյանը 2005 թվականից անցնում է <<Արթիկ բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության նարկոլոգիական և հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ <<հետադարձ դեպրեսիվ խանգարում, ծանր ընթացքիկ էպիզոդ>> ախտորոշմամբ:

Հիշյալ հանգամանքի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը իր ՎԲ-73/08 նախադեպային որոշմամբ՝ /...... երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

Դեպքի առթիվ 2018 թվականի մայիսի 14-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 28153618 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին:

Ստուգմամբ պարզվել է, որ Մխիթար Շավարշի Մխիթարյանը 2006 թվականից անցնում է ,,Արթիկ բժշկական կենտրոն,, ՓԲ ընկերության հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ ,,հետադարձ դեպրեսիվ խանգարում ծանր ընթացիկ էպիզոդ,, ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 28153618 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Դեպքի վերաբերյալ բացատրություն, հաղորդում, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Մխիթար Շավարշի Մխիթարյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո՝ ապա ինչ հիվանդությամբ:

բ/ Դեպքի վերաբերյալ բացատրություն, հաղորդում, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Մխիթար Շավարշի Մխիթարյանի մոտ առկա են ժամանակավոր հիվանդագին երևույթներ, հոգեկան գործունեության խանգարումներ, եթե այո՝ ապա ինչպիսիք:

գ/ Մխիթար Շավարշի Մխիթարյանի մոտ առկա են արդյոք հոգեկան պակասություններ, որի հետևանքով նա ի վիճակի չէ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

դ/ Մխիթար Շավարշի Մխիթարյանը կարող է գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

ե/ Մխիթար Շավարշի Մխիթարյանը դեպքի ժամանակ կարող էր ադեկվատ ձևով ըմբռնել և վերարտադրել իրականությունը և գործի համար կարևոր հանգամանքների մասին տալ ճիշտ ցուցմունքներ:

Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

**Ավագ քննիչ՝** **Ն.Ս.Մանանդյան**